

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՌՈՒԲԵՆԻ

**ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ XVІІІ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ**

**Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
Կոստիկյան Ք.Պ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ստեփանյան Գ.Ս.

պատմական գիտությունների թեկնածու
Մխիթարյան Գ.Ժ.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. մայիսի 7-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. մարտի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Թեմայի արդիականությունը

XVIII դարի երկրորդ կեսին Հյուսիսային Իրանում և Այսրկովկասում կիսանկախ կարգավիճակ ունեին Երևանի, Նախիջևանի, Խոյի, Մակուի, Ղարաղալի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի (1765թ հետո այս խանությանն է միացվում նաև Դերբենդի խանությունը), Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդաբիլի, Մարաղայի, Սավուջ-Բուլաղի, Ղարաբաղի խանությունները¹: Կիսանկախ խանությունների ի հայտ գալով փոխվեց քաղաքական իրադրությունը տարածաշրջանում: Այս պետական միավորները սկսեցին համեմատաբար ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարել թե՛ միմյանց հետ, թե՛ հարևան տերությունների հետ և թե՛ Իրանում մեծ ազդեցություն ունեցող գործիչների հետ: Նման հանգամանքներում ակտիվ գործունեություն են ծավալում նաև ժամանակի հայ նշանավոր գործիչները, և հայությունը սկսում է կարևոր դերակատարում ունենալ ոչ միայն Երևանի խանության ներքին, այլ նաև արտաքին քաղաքականության մեջ: Ուստի թեմայի ուսումնասիրումն անհրաժեշտ է Երևանի խանության տնտեսական և քաղաքական կյանքում հայության ունեցած կարևոր դերակատարումը ներկայացնելու տեսանկյունից: Թեման արդիական է հատկապես այն հանգամանքով, որ խանությունում ընթացող ժողովրդագրական գործընթացներին վերաբերվող պարսկալեզու սկզբնաղբյուրների ուսումնասիրումը և վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հերքելու ադրբեջանցի կեղծարարների կողմից առաջ քաշվող բազմաթիվ սխալ մոտեցումներ, որոնցից են Երևանի խանության ադրբեջանական, իսկ նրա բնակչության մեծամասնությունը ադրբեջանցիներից բաղկացած լինելու վերաբերյալ և այլ գաղափարները:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության, Իրանի և Ռուսաստանի միջև սուր պայքար ծավալվեց Այսրկովկասում, այդ թվում նաև Երևանի խանությունում ազդեցության ընդլայնման համար: Ուստի թեման արդիական է նաև տերությունների և Երևանի խանության հարաբերությունների ուսումնասիրման, ինչպես նաև տարածաշրջանային քաղաքական իրադարձություններում խանության խաղացած դերակատարման ուսումնասիրման տեսանկյունից:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ուսումնասիրման շնորհիվ նոր փաստեր են ի հայտ գալիս, որոնց միջոցով հնարավոր է դառնում թեման առավել խորքային հետազոտության ենթարկել և տարբեր հարցեր մանրամասն լուսաբանել:

¹Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան, 1958, էջ 29:

Աշխատանքի նպատակը և խնդիրները

Չնայած խանութային այդ ժամանակաշրջանի պատմությունը հետազոտվել է տարբեր ուսումնասիրողների կողմից, այնուամենայնիվ բազմաթիվ հարցեր դեռևս ամբողջովին լուսաբանված չեն և կարիք ունեն խորքային հետազոտության: Ուստի սույն ատենախոսությունում մեր նպատակն է ուսումնասիրել վերոնշյալ թեման, որպես հիմնական աղբյուր օգտագործելով Մատենադարանի պարսկալեզու վավերագրերը և Երևանի խաների նամականին:

Ատենախոսության խնդիրներն են՝

- ուսումնասիրել Մատենադարանի պարսկալեզու վավերագրերը՝ շահական և խանական հրովարտակաները, խանական նամակաները որպես պարսկական վավերագրագիտության նմուշներ,

- դրանց հաղորդած տեղեկությունների միջոցով քննել Երևանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմության մի շարք հարցեր, որոնցից են.

- Երևանի խաների ժամանակագրական կարգը
- Երևանի խաների և Էջմիածնի կաթողիկոսների փոխհարաբերությունները,
- հողատիրության ձևերը և հարկային համակարգը Երևանի խանությունում,
- Էջմիածնի վանական հողատիրությունը տվյալ ժամանակաշրջանում,
- Երևանի խանության բնակչության էթնիկ կազմը, խանությունում ընթացող ժողովրդագրական փոփոխությունները, հայ բնակչության թվաքանակի ավելացմանը և նվազմանը նպաստող գործոնները,
- Երևանի խաների արտաքին քաղաքականությունը, փոխհարաբերությունները հարևան խաների, վրաց թագավորների, նաև Ռուսաստանի, Իրանի և Օսմանյան կայսրության իշխանությունների հետ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները

Թեմայի ուսումնասիրումը ընդգրկում է XVIII դարի երկրորդ կեսը, ինչը պայմանավորված է տվյալ ժամականակաշրջանում Երևանի խանության ունեցած կիսանկախ կարգավիճակով:

Ատենախոսության գիտական նորույթը

Մինչ այս որոշ ուսումնասիրություններ են իրականացվել թեմայի վերաբերյալ: Սակայն Երևանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմությունը որպես առանձին պատմական ժամանակաշրջան խորքային ուսումնասիրման չի ենթարկվել: Այս ատենախոսությունով փորձ է արվում լրացնել այդ բացը՝ Մատենադարանի պարսկալեզու վավերագրերի ուսումնասիրման միջոցով:

Ատենախոսության գիտական նորույթներից են Երևանի խաների դեռևս չուսումնասիրված նամակների ու հրամանագրերի տվյալների հիման վրա նրանց կառավարման ժամանակագրության ճշգրտումը, Էջմիածնի կաթողիկոսների և Երևանի խաների հարաբերությունների բազում նոր ծայքերի վերհանումն ու ուսումնասիրումը, Էջմիածնի վանքի կալվածքների, դրանց նկատմամբ ունեցած իրավունքների, Երևանի խանությունում կիրառվող հարկատեսակների հետազոտությունը:

Երևանի խաների նամակների ուսումնասիրությունը թույլ է տվել հիմնավոր կերպով լուսաբանել Երևանի խանության արտաքին քաղաքականությունը, այդ համատեքստում վեր հանել նոր փաստեր Երևանի խաների և վրաց Հերակլ 2-րդ² արքայի հարաբերությունների, Երևանի խաների կողմից վրաց արքունիքին վճարվող հարկերի և դրանց գանձման եղանակների վերաբերյալ: Երևանի Հուսեյն Ալի և Ղուլամ Ալի խաների օսմանյան իշխանություններին ուղարկված նամակների հիման վրա նոր փաստեր ու մանրամասներ են բացահայտվում վերջիններիս և Երևանի խաների փոխհարաբերությունների, Օսմանյան կայսրությունից ուղարկված նվերների և հրամանագրով շնորհված տարածքների վերաբերյալ:

Աշխատանքի մեթոդական հենքը

Աշխատանքը շարադրելիս առաջնորդվել ենք սկզբնաղբյուրների համեմատական և քննական վերլուծության, պատմական փաստերի համեմատական համադրման մեթոդաբանությամբ: Ձերծ ենք մնացել չափազանցված և կողմնակալ տեղեկությունների վրա հիմնվելուց՝ միաժամանակ լիովին չանտեսելով դրանք: Խուսափել ենք հաստատուն մոտեցումներ և եզրահանգումներ կատարել աղբյուրագիտական թույլ հիմք ունեցող տվյալների վերաբերյալ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսության դրույթները կարևոր են XVIII դարի երկրորդ կեսի ինչպես Երևանի խանության, այնպես էլ Այսրկովկասի պատմության ուսումնասիրման համար: Արված եզրակացությունները կարող են հիմք

² Տվյալ ժամանակահատվածում գոյություն ուներ երեք վրացական թագավորություն. դրանցից Իմերեթիայում թագավորում էր Սողոմոնը, Քարթլիում թագավորում էր Թեյմուրազ 2-րդը, Կախեթում՝ վերջինիս որդի Հերակլ 2-րդը: 1762թ. հետո Քարթլին և Կախեթը միացան Հերակլ 2-րդի իշխանության ներքո որպես միասնական թագավորություն: Քանի որ Հերակլ 2-րդի թագավորությունը սկզբնաղբյուրներում և իր ժամանակի փաստաթղթերում կոչվում է նաև Վրաստան, մենք ևս ատենախոսությունում Վրաստան անվան ներքո նկատի կունենանք Հերակլ 2-րդի թագավորությունը:

դառնալ թեմայի վերաբերյալ նոր, առավել խորը հետազոտությունների իրականացման, ինչպես նաև հայագիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների շարադրման համար:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Արևելյան պատմագրության և աղբյուրագիտության» բաժնի կողմից:

Աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսության շարադրման համար որպես հիմնական աղբյուր օգտագործվել են Երևանի խաների պարսկալեզու վավերագրերը և նամականիս, որոնք պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում և Արաբատառ ձեռագրերի ֆոնդում: Կաթողիկոսական դիվանի վավերագրերը հիմնականում փաստաթղթերի բնօրինակներն են: Իսկ Արաբատառ ձեռագրերի ֆոնդում պահպանվող նամականիս Երևանի Հուսեյն Ալի խանի (1759-1783թթ.), նրա որդիներ Ղուլամ Ալի խանի (1783-1784թթ.) և Մոհամմադ խանի (1784-1805թթ.) նամակների և հրովարտականքների պատճենների ժողովածուն է, որը կազմել է խանական դիվանի գրագիր Միրզա Մոհամմադ Մուսալլամը: Իրանական իշխանությունների հրապարակած հրովարտականքների մեծ մասը հայերեն, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների հետ զուգահեռ մի քանի հատորով հրատարակվել են Հ. Փափազյանի և Բ. Կոստիկյանի կողմից,³ ինչը հեշտացնում է այդ կարգի այլ աղբյուրների ուսումնասիրումը: Ավելին, Մատենադարանի պարսկերեն հրովարտականքների չորրորդ պրակը հավելյալ նյութ է ապահովում Իրանի գահին XVIII դարի երկրորդ կեսին հավակնող և իշխանությունը գրաված տիրակալների և Երևանի խաների ու Էջմիածնի կաթողիկոսների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Պարսկալեզու վավերագրերում և նամակներում առկա տեղեկությունները լրացվում են այլ աղբյուրների շնորհիվ: Մեծ արժեք են ներկայացնում

³ Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտականք, պրակ առաջին (ԺԵ-ԺՁդդ.), Երևան, 1956, Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականք, պրակ երկրորդ (1601-1650թթ.), Երևան, 1959, Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրեր, պրակ I (ԺԴ-ԺՁդդ.), Երևան, 1968, Բ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտականք, պրակ երրորդ (1652-1731), Երևան, 2005, Բ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտականք, պրակ չորրորդ(1734-1797), Երևան, 2008:

Էջմիածնի կաթողիկոսներ Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու նամակները, որոնք հրատարակվել են Գյուտ ավագ քահանա Աղանյանցի կողմից մի քանի հատորով⁴: Այդ նամակները, որոնց մի մասն ուղղված են տարածաշրջանի տարբեր առաջնորդների՝ Հերակլ 2-րդին, Իրանի խաներին, օսմանյան փաշաներին և այլոց, կարևոր տեղեկություններ են հաղորդում ժամանակաշրջանի միջազգային իրադրության, հայ կաթողիկոսների դիվանագիտական կապերի վերաբերյալ: Իսկ հայ հոգևորականներին և այլ գործիչներին ուղարկված նամակներում կաթողիկոսները երբեմն մանրամասնորեն շարադրում են իրենց ապրած ժամանակահատվածում Երևանի խանությունում տեղի ունեցող իրադարձությունները:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը ժամանակաշրջանի անփոխարինելի սկզբնաղբյուր է Էջմիածնի վանքի տնտեսությունն ուսումնասիրելու, պարսկալեզու վավերագրերում առկա տեղեկությունները լրացնելու և ամբողջացնելու համար⁵: Կաթողիկոսն իր աշխատությունում նկարագրում է տարբեր ժամանակներում Էջմիածնին պատկանած կալվածքները, դրանց ձեռքբերման հանգամանքներն ու դրանց նկատմամբ վանքի ունեցած իրավունքները:

Թեմայի ուսումնասիրման համար մեծ կարևորություն ունեն նաև վրացական, ռուսական և օսմանյան աղբյուրները:

Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից հրատարակված վրացերեն սկզբնաղբյուրներն արժեքավոր տեղեկություններ են հայտնում խնդրո առարկա ժամանակաշրջանում վրաց արքաների դեպի Երևան իրականացրած արշավանքների, տարածաշրջանում տեղի ունեցած այլ իրադարձությունների վերաբերյալ⁶: Այդուհանդերձ վրաց հեղինակների հաղորդած տեղեկություններին պետք է վերապահումով մոտենալ, քանի որ վերջիններս, ցանկանալով փառաբանել վրաց արքաներին, երբեմն ոչ օբյեկտիվ են ներկայացնում իրադարձությունները՝ վրաց արքաներին մեծ հաջողություններ վերագրելով, չափազանցնելով նրանց զորքի, նրանց կողմից գերվածների թվերը և այլն: Աշխատությունը շարադրելիս օգտվել ենք Ա. Սաֆրաստյանի աշխատասիրությամբ հրատարակված թուրքական սկզբնաղբյուրներից, որոնցում, ինչպես վրացական սկզբնաղբյուրներում, հանդիպում ենք իրադարձությունները ոչ օբյեկտիվորեն ներկայացնելու, երբեմն

⁴ Գ. Աղանեանց, Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս 1893, Գ. Աղանեանց, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարան, Թիֆլիս, 1894, Գ. Աղանեանց, Դիվան հայոց պատմության, գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780 — 1800) Թիֆլիս, 1899, Գ. Աղանեանց, Դիվան Հայոց պատմության, գիրք Ը, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարան մասն երկրորդ (1767-1776), Թիֆլիս, 1908:

⁵ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Երևան 2003:

⁶ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1955:

չափազանցությունների դիմելու երևույթների⁷: Մեր կողմից ուսումնասիրված թուրքական աղբյուրներում հատկապես արժեքավոր է սուլթան Աբդուլ Համիդ I Ղազիի (1774-1789թթ.) Երևանի Հուսեյն Ալի խանին ուղղված ֆերմանը, որը բացառիկ տեղեկություններ է հաղորդում Հուսեյն Ալի խանի և Օսմանյան կայսրության հարաբերությունների, տարածաշրջանի քաղաքական իրադրության վերաբերյալ:

Թեմային առնչվող օտարալեզու սկզբնաղբյուրների շարքում կարևոր են հատկապես ռուսականները: Դրանք հիմնականում տարածաշրջանում դիվանագիտական, ռազմական, առևտրային և այլ գործունեություն իրականացրած անձանց հաշվետվությունները, նամակները և օրագրություններն են, որոնցից մի մասը պահվում է Ռուսաստանի դաշնության արխիվներում: Դրանց մի մասը մի քանի հատորով հրատարակվել են⁸: Ժողովածուներում հրատարակված են հայ նշանավոր գործիչների, վրաց Հերակլ 2-րդ թագավորի, Իրանի մի շարք խաների, ռուսական իշխանությունների ներկայացուցիչների և տարածաշրջանի քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն ունեցող այլ անձանց նամակներ, զեկույցներ, հրամաններ և նմանատիպ այլ գրավոր փաստաթղթեր:

Թեմայի շարադրման ընթացքում հետազոտություններ են իրականացվել Ռուսաստանի հին ակտերի պետական արխիվում և Ռուսաստանի ռազմա-պատմական պետական արխիվում, որտեղ ծանոթացել ենք չիրատարակված փաստաթղթերի. մասնավորապես 1780-1785թթ. Իրանում Ռուսաստանի հյուպատոս Իվան Վասիլևիչ Տումանովսկու և Իրանի խաների ռուսական իշխանություններին հասցեագրված նամակներին: Ռուսական սկզբնաղբյուրների շարքում առանձնահատուկ կարևորություն ունի Շոպենի աշխատությունը՝ նվիրված Երևանի նահանգի վիճակագրական նկարագրությանը⁹: Հեղինակն իր աշխատանքը գրելու համար ուսումնասիրություն է իրականացրել 1829-1831թթ., ինչի շնորհիվ Երևանի խանության տարածքի, բնակչության, կառավարման համակարգի և այլ հարցերի վերաբերյալ նրա հաղորդած տեղեկությունները աչքի են ընկնում իրենց արժանահավատությամբ:

⁷Ա. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա, Երևան, 1964:

⁸Армяно-русские отношения во втором тридцатилетни XVIII века, Сборник документов, т. III, В. Восканян, Дж. Галустян, В. Мартиросян, Ереван, 1978, Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800гг., Сборник документов. т. IV, А. Алексанян, В. Мартиросян, М. Нерсисян, П. Чобанян, Ереван, 1990.

⁹ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санктпетербург, 1852.

Ինդրո առարկա ժամանակաշրջանում Ռուսաստանի Այսրկովկասյան քաղաքականության, Այսրկովկասում և Իրանում ընթացող իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Պ. Բուտկովի աշխատությունը¹⁰: Չնայած այստեղ առկա են որոշակի թվագրական սխալներ, այնուամենայնիվ աշխատությունում առկա տեղեկությունը կարևոր է տարածաշրջանում ընթացող դեպքերի ուսումնասիրման համար:

Թեմայի շարադրման ընթացքում օգտվել ենք նաև Կովկասյան Հնագրագիտական հանձնաժողովի կողմից հրատարակված Ռուսական հրամանատարների, պաշտոնյաների և Այսրկովկասի իշխողների նամակներից ու այլ փաստաթղթերից¹¹: Այս վավերագրերը կարևոր տեղեկություններ են հաղորդում XVIII դարի II կեսում Այսրկովկասի միջխանական բախումների, ժողովրդագրական փոփոխությունների և տարածաշրջանում ընթացող այլ կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

XVIII դարի երկրորդ կեսում Այսրկովկասում Ռուսաստանի, Օսմանյան կայսրության և Իրանում քաղաքական ազդեցություն ունեցող գործիչների ծավալված գործունեության մասին է Օ. Մարկովայի աշխատությունը¹²: Հեղինակը խորքային քննության է ենթարկել տեղությունների մրցակցությունը Այսրկովկասում՝ առավել մանրամասն անդրադառնալով ռուս-թուրքական, ռուս-իրանական հարաբերություններին և դրանցում վրացական թագավորությունների դերին:

Երևանի խանությունում եղած հողատիրության ձևերի և հարկային համակարգի ուսումնասիրման համար անփոխարինելի արժեք ունեն Ի. Պետրովսկու¹³ և Հ. Փափազյանի աշխատությունները¹⁴: Երկու հեղինակներն էլ իրենց աշխատությունները շարադրելիս օգտվել են գլխավորապես պարսկական վավերագրերից: Պետրովսկին Մատենադարանի պարսկերեն վավերագրերին զուգահեռ օգտվել է նաև ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Թիֆլիսի մասնաճյուղ Ն. Մադի անվան ինստիտուտի կողմից հրատարակված Նախիջևանի և Ղուբայի խանությունների վավերագրերից, իրանական, արևմտաեվրոպական,

¹⁰ П. Бутков, Материали для новой истории Кавказа, с 1722 по 1803 года, ч. 1, Санктпетербург 1869.

¹¹ АКТЫ собранные кавказской археографической комиссией, т. 1, Тифлис, 1866 (այսուհետ՝ АКАК), АКАК, т. VI/1, Тифлис, 1866, АКАК т. VIII, Тифлис, 1881.

¹² О. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

¹³ И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв. Ленинград, 1949.

¹⁴ А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван, 1972.

ռուսական սկզբնաղբյուրներից: Եթե Պետրուշևսկու աշխատությունը վերաբերվում է Այսրկովկասի ֆեոդալական հարաբերություններին, ապա Փափագյանը կենտրոնացել է Արևելյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների վրա՝ սահմանափակվելով XVI-XVII դարերով: Պետրուշևսկու և Փափագյանի այս աշխատություններն հնարավոր են դարձնում առավել խորքային և առարկայական ձևով հետազոտել Երևանի խանության սոցիալ-տնտեսական պատմության հարցերը, քանի որ դրանք իրենց մեջ կրում էին նախորդ՝ Սեֆյան ժամանակաշրջանին բնորոշ շատ հատկանիշներ:

Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք Պ. Չոբանյանի աշխատությունից¹⁵: Հեղինակն իր աշխատությունում հատուկ ուշադրություն է դարձրել XVIII դարի երկրորդ կեսին հայ-ռուսական, հայ-վրացական և վրաց-ռուսական հարաբերություններին՝ լուսաբանելով Այսրկովկասում ընթացող քաղաքական դեպքերին վերաբերվող բազմաթիվ կարևոր հարցեր: Հեղինակը, օգտվելով բազմալեզու սկզբնաղբյուրներից, թեմային վերաբերվող հարցերը խորքային քննության է ենթարկել և շարադրել մատչելի լեզվով, ինչն ավելի է բարձրացնում աշխատության գիտական արժեքը:

Երևանի խանության XVIII դարի վերջին քսանամյակի պատմության շարադրման հաջողված փորձ է Վ. Գրիգորյանի աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է խանության քսան տարվա պատմությունը:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականություն, ատենախոսության նպատակը և խնդիրները, աշխատանքի շարադրման մեթոդաբանությունը, գիտական նորույթը, աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է «**ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՄԿԱԼԵԶՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**»: Այն բաժանված է երկու ենթագլխի: Առաջին ենթագլուխը վերնագրված է «Երևանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմությանը վերաբերվող պարսկերեն վավերագրերը որպես պարսկական գրագրության նմուշներ»: Այստեղ

¹⁵ Պ. Չոբանյան, Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Երևան 2006:

ներկայացված են թեմայի ուսումնասիրության մեջ ներգրավված պարսկերեն վավերագրերի՝ հրովարտակների ու նամակների կառուցվածքին և լեզվաոճական առանձնահատկություններին վերաբերվող բնորոշումները:

Երկրորդ ենթագլխում՝ «Երևանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմությանը վերաբերվող պարսկերեն վավերագրերի բովանդակային առանձնահատկությունները» ներկայացված են վավերագրերի տվյալների բնույթը, ընդգրկած հարցերի շրջանակը և թեմատիկ առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»** և կազմված է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխում՝ «Երևանի խանության տարածքը և կառուցվածքը», քննության ենք ենթարկել և ներկայացրել խանության սահմանների, վարչական բաժանումների վերաբերյալ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները: Այստեղ ուսումնասիրել ենք նաև խանության կառավարման համակարգի ու վարչական ապարատի վերաբերյալ աղբյուրներում առկա տվյալները:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Երևանի խանության բնակչության էթնիկ կազմը»: Այս գլխում սկզբնաղբյուրներից ստացած տվյալների միջոցով ուսումնասիրել և ներկայացրել ենք խանությունում ընթացող ժողովրդագրական փոփոխությունները, հայերի համամասնությունը խանությունում ապրող այլազգիների համեմատ: Անդրադարձ ենք կատարել նաև խանության բնակչության վերաբերյալ աղբյուրներում ներկայացված կեղծ տեղեկություններին և մոտեցումներին՝ բացահայտելով վերջիններիս առաջ քաշած տեսակների կեղծ և գիտական հիմնավորումից զուրկ լինելը:

Երրորդ ենթագլուխը կրում է «Երևանի խանության տնտեսական համակարգը» վերնագիրը: Այս ենթագլխում ներկայացրել են խանության հարկային համակարգը, հողատիրության ձևերը, իրանական տիրակալների հրովարտակներով էջմիածնի վանքին հատկացված հողատարածքները, դրանց նկատմամբ վանքի ունեցած իրավունքները, պետության և էջմիածնի վանքի տնտեսական փոխհարաբերությունները, վանքապատկան հողերի ձեռքբերման և օտարման դեպքերն ու մեթոդները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ 1750-1770-ԱԿԱՆՆԵՐԻՆ»**: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Երևանի խանությունը տարածաշրջանային քաղաքական իրադրությունում 1750-1770-ականներին», քննարկվում և լուսաբանվում են վերոնշյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձություններն Այսրկովկասում, Երևանի համար Ազատ խանի և

Հերակլ 2-րդ արքայի մղած պայքարը, ինչպես նաև Այսրկովկասում ռուսական և օսմանյան իշխանությունների վարած քաղաքականությունը:

Երկրորդ ենթագլուխը կրում է «Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1760-1770-ականներին»: Երևանի խանությունն իր հարուստ տնտեսությամբ և անառիկ բերրով կարևոր ռազմավարական նշանակություն ուներ Այսրկովկասում: Ուստի տարածաշրջանային քաղաքական իրադարձություններին անմասն մնալ չէր կարող: Այս ենթագլխում ներկայացված են Երևան Հուսեյն Ալի խանի հարաբերությունները ռուսական, թուրքական և վրացական իշխանությունների հետ, ինչպես նաև խանության ունեցած դերակատարումը ռուս-վրաց-թուրքական հարաբերություններում:

Երրորդ ենթագլուխը՝ «Երևանի Հուսեյն Ալի խանի և Հերակլ 2-րդի փոխհարաբերությունները», նվիրված է երկու տիրակալների փոխհարաբերությունների առանձին ծայքերի վերհանմանը: Երևանի խանը, լինելով վրաց արքայի հարկատուն, պարբերաբար խուսափում էր հարկատվությունից, ինչին երբեմն հաջորդում էր Հերակլ 2-րդի պատժիչ արշավանքը Երևան: Այս ենթագլխում քննում և լուսաբանում ենք հարկատվությունից խուսափելու դրդապատճառները, եղանակները, վրաց արքայի դեպի Երևան իրականացրած արշավանքների աշխարհաքաղաքական նախապայմաններն ու հետևանքները:

Չորրորդ գլուխը վերնագրված է «**ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1780-ԱԿԱՆՆԵՐԻՆ**»: Այն բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Երևանի խանությունը 1780-ականների ռուս-իրանական հարաբերությունների համատեքստում», անդրադարձ է կատարվել Քերիմ խանի մահվանից հետո Իրանում ծավալված գահակալական պայքարին և գահի հավակնորդների հարաբերություններին ռուսական իշխանությունների հետ: Մատենադարանի պարսկերեն նամականու ուսումնասիրության միջոցով հնարավոր է լինում նոր իրողություններ բացահայտել ռուս-իրանական փոխհարաբերությունների զարգացման, Երևանի խանության նկատմամբ իրանական և ռուսական իշխանությունների վարած քաղաքականության մասին:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1780-ականներին»: Այս ենթագլխում քննության ենք ենթարկում Գեորգիևսկի պայմանագրին հաջորդող ժամանակահատվածում Երևանի խանությունն իրենց ազդեցության ներքո առնելու ուղղությամբ թուրքական, ռուսական և վրացական իշխանությունների վարած քաղաքականությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ բաժնում ամփոփվում են ատենախոսության մեջ կատարված աշխատանք արդյունքները, ըստ որոնց արվել են հետևյալ եզրակացությունները՝

- Նադիր շահի սպանությունից հետո սկսված խառնակ ժամանակաշրջանում 1750-ականներին Երևանի խանությունում իշխանության էին գալիս տարբեր խաներ: Այս ժամանակահատվածի պատմության վերաբերյալ մինչ այս խորքային ուսումնասիրություն չէր կատարվել, և այն հիմնականում լուսաբանված չէր: Երևանի խաների պարսկալեզու վավերագրերն առաջնային սկզբնաղբյուր են այդ բացը լրացնելու համար: Ատենախոսությունում առավել մանրամասն ներկայացված են Երևանի շուրջ Ազատ խանի և Հերակլ 2-րդի մղած պայքարը, Ազատ խանի Երևանում ծավալված գործունեությունը, Էջմիածնի կաթողիկոսների և Երևանի Ազատ խանի, ապա նաև Խալիլ խանի հարաբերությունները:

- Այսրկովկասում Իրանի ազդեցության թուլացմանը զուգահեռ Օսմանյան կայսրությունը և Ռուսաստանը փորձեր կատարեցին տարածաշրջանում իրենց ազդեցությունը տարածելու և ամրապնդելու ուղղությամբ: Այս իրադրությունում Երևանի խաները սկսեցին ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալել՝ փորձելով խուսանավել և չտուժել ռուս-թուրքական մրցակցությունից: Երևանի խաների պարսկալեզու նամականիներ կարևոր սկզբնաղբյուր է խանության արտաքին քաղաքականության ուսումնասիրման համար: Խաների թուրքական արքունիք ուղարկված նամակների ուսումնասիրման արդյունքում մինչ այս պատմագրությանն անհայտ նոր փաստեր են վեր հանվել, ինչի շնորհիվ առավել խորքային քննության ենթարկեց խանության և օսմանյան իշխանությունների հարաբերությունները. ներկայացվեց օսմանյան իշխանությունների տարածաշրջանային քաղաքականությունը, Երևանի խանության դերակատարումն Այսրկովկասում ընթացող քաղաքական գործընթացներում: Երևանի խաները, լինելով տերությունների մրցակցության կիզակետում, պահպանեցին իրենց կիսանկախ կարգավիճակը՝ չմերժելով ո՛չ ռուսական, ո՛չ օսմանյան իշխանությունների իրենց ենթակայության ներքո անցնելու առաջարկը՝ միաժամանակ նաև բացահայտորեն չդաշնակցելով հակամարտող կողմերից մեկի հետ ընդդեմ մյուսի:

- Երևանի Հուսեյն Ալի և Ղուլամ Ալի խաների վրացական արքունիք ուղարկված նամակներում կարևոր տեղեկություններ են առկա երկկողմ հարաբերություններին առնչվող զանազան հարցերի վերաբերյալ: Նամականու ուսումնասիրման միջոցով ատենախոսությունում ներկայացվել են Երևանի խաների վրացական արքունիք ուղարկվող հարկերից խուսափելու միջոցները, կողմերի հարաբերությունները Հերակլ 2-րդի 1779թ. Երևան կատարած պատժիչ արշավանքին նախորդող ժամանակահատվածում, վրաց արքայի հետ հաշտվելու ուղղությամբ Հուսեյն Ալի խանի ձեռնարկած քայլերը և երկկողմ փոխհարաբերություններին վերաբերվող այլ հարցեր: Ղուլամ Ալի խանի նամակների հաղորդած տեղեկությունների ուսումնասիրման միջոցով ներկայացվել է վերջինիս արտաքին քաղաքականությունը.

հարաբերություններն օսմանյան իշխանությունների հետ, վրացական ազդեցությունից դուրս գալու և թուրքամետ քաղաքականություն վարելու փորձերը, որոնք ավարտվեցին Ղուլամ Ալիի սպանությամբ:

Այսպիսով, գրեթե կես դար Երևանի խանությունը կիսանկախ իշխանություն էր՝ ունենալով պետությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ իրանական տիպի վարչական կառավարման համակարգ, ռազմական ուժեր և այլն: Դրանք ենթարկվում էին խանությունում իշխանության գլխին կանգնած խանին, ով իր հերթին ուներ բացարձակ անսահմանափակ իշխանություն խանության տարածքում և անկախ էր այլ իշխանությունների ու պետությունների հետ հարաբերություններում: Խանությունում կարևոր տնտեսական և քաղաքական դերակատարում ուներ բնակչության մեծամասնությունը կազմող հայ բնակչությունը: Երևանն առանցքային դերակատարում ուներ Այսրկովկասում ընթացող գործընթացներում, ինչով պայմանավորված էլ խաները վարում էին ակտիվ արտաքին քաղաքականություն՝ խուսանավելով ռուսական և օսմանյան իշխանությունների, Հերակլ 2-րդ արքայի և Իրանում մեծ ազդեցություն ունեցող գործիչների հարաբերություններում: Այս ամենի արդյունքում Երևանի խաները մինչ Աղա Մուհամմադ Խան Ղաջարի արշավանքը պահպանեցին իրենց կիսանկախ կարգավիճակը:

Հավելվածն իրենից ներկայացնում է ուսումնասիրված պարսկերեն վավերագրերում հանդիպող և ատենախոսությունում օգտագործված հարկային, սոցիալական, վարչական և այլ եզրույթների բառարան:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի
հետևյալ հրապարակումներում

1. Hakobyan V., The Russian-Georgian-Turkish Relations in 1760-1770-is, The Materials of II International Scientific Conference "Politics Around the Caucasus", Tbilisi, 2016, pp. 80-83.

2. Հակոբյան Վ., Երևանի խանությունը 1749-1755թթ.-ին., Արևելագիտության հարցեր, հ. 13, Երևան, 2017, էջ 91-100:

3. Հակոբյան Վ., Ժողովրդագրական փոփոխությունները Երևանի խանությունում 1724-1800թթ., Մերձավոր Արևելք, IX-XII, հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 224-231:

4. Հակոբյան Վ., Երևանի խանությունը 1780-ականներին տարածաշրջանային քաղաքական իրադրության համատեքստում, Հայագիտական հանդես, № 4(38), Երևան, 2017, էջ 200-209:

5. Hakobyan V., Transcaucasia in the Context of Russian-Turkish and Russian-Iranian Relations (1760-1780-ies), Collection of Scientific Articles of YSU SSS, 1.1. (18), Yerevan, 2017, pp. 276-285.

6. Հակոբյան Վ., Էջմիածնի կաթողիկոսների դերը Երևանի խանության XVIII դարի 2-րդ կեսի քաղաքական անցուղարձում, Հայագիտական հանդես, № 3(41), Երևան, 2018, էջ 199-208:

7. Հակոբյան Վ., Քաղաքական իրադրությունը Երևանի խանությունում և նրա շուրջ 1780-ականներին ըստ Ղուլամ Ալի խանի նամակագրության, Բանբեր Մատենադարանի, Երևան, 2018, էջ 84-92:

Акобян Ваагн Рубенович
Проблемы истории Ереванского ханства во второй половины XVIII века по
персидским документам Матенадарана

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита состоится 7-го мая 2019 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Настоящее исследование посвящено изучению истории Ереванского ханства во второй половине XVIII века на основе персидских документов Матенадарана.

Некоторые из этих документов были изучены впервые, сведения и данные этих документов позволяют более пространно и глубинно изучить такие вопросы истории Ереванского ханства, как экономическая система региона, роль, права и обязанности армян, а так же политико-правовое и экономическое состояние Святого Престола Эчмиадзина под властью ханов Еревана, проблемы вызванные правонарушениями местных мусульманских влиятельных деятелей и механизмы урегулирования этих проблем, демографические процессы в ханстве, геополитические процессы в Закавказье и роль Ереванского ханства в них, внешняя политика ереванских ханов.

Диссертация состоит из предисловия, четырёх глав, заключения списка использованных источников и литературы, а также из приложения.

В предисловии представлена актуальность темы, научно-практическая новизна и значение, цель и задачи исследования, методология написания работы, обзор источников и уровень изученности.

Первая глава - **«Лингвистические, стилистические и структурно-содержательные особенности персоязычных документов Матенадарана по истории Ереванского ханства во второй половине XVIII века»** состоит из 2-х параграфов, в которых описаны особенности структуры и стилистики персидских документов-грамот, писем, связанных с изучением данной темы, содержательные особенности документов привлеченных к работе в качестве источников.

Вторая глава - **«Административная и экономическая структура Ереванского ханства»** состоит из 3-х параграфов. В первом параграфе исследуется информация источников о границах и административного деления ханства. Во втором параграфе изучены и выявлены демографические изменения в ханстве

на основе данных, полученных из источников, а также доля армян в ханстве по сравнению с другими национальностями, проживающими в ханстве. Исследована ложная информация об этническом составе ханства, представленная в азербайджанской историографии, в которой отсутствуют реальные обоснования. В третьем параграфе исследуются налоговая система ханства, типы земельных участков, земляные участки отведенные Эчмиадзинскому монастырю по приказу иранских правителей, права монастыря на них.

Третья глава - **«Политическая ситуация в Ереванском ханстве и вокруг него в 1750-1770-х гг»** состоит из трех параграфов. В первом параграфе обсуждаются политические события упомянутого периода в Закавказье, борьба между Азат ханом и Ираклием II за преобладание над Ереванским ханством. Во втором параграфе исследуются отношения Хусейна Али хана с властями России, Турции и Грузии, а также его роль в российско-грузино-турецких отношениях. Третий посвящен изучению отдельных вопросов касающихся взаимоотношений двух правителей. Ереванский хан, являясь налогоплательщиком грузинского царя, регулярно избегал выплаты налогов. В этой главе рассмотрены и показаны мотивы, способы уклонения от выплаты налогов, геополитические предпосылки и последствия вторжений Ираклия II в Ереванское ханство.

Четвёртая глава - **«Ереванское ханство в 1780-х годах»**, состоит из двух параграфов. В первом параграфе рассмотрена борьба за трон в Иране после смерти Керим хана и отношения кандидатов на престол с российскими властями. На основе персидской переписки ханов, выявлены новые факты и нюансы в российско-иранских отношениях, а также в политике, проводимой иранскими и российскими властями в отношении Ереванского ханства. Во втором параграфе рассматривается политика властей Турции, России и Грузии по отношению Ереванского ханства после заключения Георгиевского соглашения и их борьба за преобладание над ним.

The Issues of History of Yerevan Khanate in the Second Half of the XVIII Century
according to the Persian Documentaries of Matenadaran

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of
“Historiography, source study” 07.00.05

The defense of the dissertation will be held on May 7, 2019, 14⁰⁰ at the session of
the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History
of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave
24/4).

SUMMARY

The dissertation examines and covers the issues of the history of the second half
of the XVIII century in Yerevan Khanate, using Persian documentaries in
Matenadaran as a basis for the source material. Some of these documents have been
studied for the first time and the information and data presented in them have
allowed the author to study many problems and various issues of the history of
Yerevan khanate more thoroughly. The problems investigated in the research are: the
economic system of region; the rights and duties of the Armenians and the
Echmiadzin Monastery under the rule of Iranian khans of Yerevan; problems caused
by local Muslim officials and the mechanism of their regulation; demographic
processes in the khanate; geopolitical processes in Transcaucasia and the role of
Yerevan khanate in it; Yerevan khans' external policy.

The thesis consists of the introduction, four chapters, conclusion, bibliography
and appendix.

The introduction introduces the relevance of the topic, the purpose and
objectives of the thesis, the methodology of writing the work, scientific novelty, the
theory of sources and literature.

The first chapter is divided into two subchapters. There presented the
definitions of the Persian documentaries, i.e decrees, structure, and writing related to
the study of the subject, the content peculiarities of the documents.

The second chapter of the thesis consists of three subchapters. In the first
subchapter we have examined and presented the information of the sources on the
boundaries and administrative division of the khanate. In this part the data of the
sources on the ruling system and the administrative apparatus of the khanate are also
investigated.

In the second subchapter the demographic changes in the Khanate and the proportion of Armenians as compared with that of the foreigners have been studied and presented with the help of the data of the sources. We also touched upon the fake information and approaches presented in the Azerbaijani historiography on the khanate population, revealing its falseness and lack of realistic justification.

In the third subchapter the khanate's tax system, the land tenure forms, the land plots allocated to the Echmiadzin Monastery by Iranian rulers' decrees, the monastery's rights over them, the economic relations of the state and the Echmiadzin Monastery, the cases and methods of acquisition and expropriation of lands owned by monasteries are studied.

The third chapter consists of three subchapters.

The first subchapter discusses and covers political events of the above-mentioned period in the Transcaucasia, the struggle between Azat Khan and Heraclius II for Yerevan, as well as the policies of Russian and Ottoman authorities in the Transcaucasia.

The second subchapter presents the relations of Yerevan Hussein Ali Khan with the Russian, Turkish and Georgian authorities, as well as the khanate's role in the Russian-Georgian-Turkish relations.

The third chapter is dedicated to the the study of certain aspects of the relationship between the two rulers. The khan of Yerevan, being the subject of the Georgian king, regularly avoided the payment of taxes, which was sometimes followed by Heraclius II's punitive invasions to Yerevan. In this subchapter we examine and cover the motives, ways to avoid taxation, the geopolitical preconditions and consequences of the Georgian King's invasions of Yerevan.

The fourth chapter consists of two subchapters.

The first subchapter reviews the struggle for the throne in Iran after the death of Kerim Khan and the relations of throne pretenders with the Russian authorities. The study of the Persian letters of Matenadaran allowed us to reveal new facts about the Russian-Iranian relations, about the policy pursued by the Iranian and Russian authorities towards Yerevan khanate.

The second subchapter examines the policy of Turkish, Russian and Georgian powers for the predominance over Yerevan khanate during the period following Georgievsk Treaty.

The tax and other terms used in the Persian documents and thesis are explained in the appendix.